

## ԵՐԱՆՈՒՀԻ ՄԵԼԻՔ-ՄՈՒՐԱԴՅԱՆ

### ԱՍՏՂԻԿ ԴԻՑՈՒՀՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՎԱՅՐԵՐԸ

Հայոց հնագույն առասպեղածիսական համակարգում Աստղիկը գլխավոր աստվածություններից մենք է: Նրա անունը բազմիցս արձանագրվել է հայ պատմիչների և այլ մատենագիրների երկերում<sup>1</sup>: Հիշատակվել են մի շարք կարևոր հանգամանքներ, որոնք կապված են նրա պաշտամունքի և գործառնական հատկանիշների հետ:

Աստղիկի պաշտամունքը բավականին տարածում ուներ հին հեթանոսական Հայաստանում: Ծիշտ է, այն որոշ չափով սահմանափակված էր, քանի որ մեջտեղ էր եկեղ Աքեմենյան և Արշակունյաց շրջանների Անահիտը՝ պետական դիցարանի աստվածութին, և Աստղիկի շատ գծեր, բնականաբար, պիտի փոխանցվեին նրան: Եվ, այդուհանդերձ, Աստղիկը սիրված էր ամենուր:

Աստղիկի անվան և պաշտամունքի հետքեր ենք գտնում պատմական Հայաստանի շատ կողմերում, բազմաթիվ տեղանունների մեջ: Տեղանուններից հատկապես մեծ կարևորություն են ստանում լեռները (Աստղաբերդ, Աստղունք, Աստղաբլուր), որոնց վրա տեղադրվել են մերժանները, բագինները և քերդերը: Պաշտամունքային այդ սահմանափակ գոտինները տեղադրված են Վաճա լճի արևմտյան և հյուսիս-արևմտյան (Տարոն, Հաշտյանք, Քղի), ինչպես նաև արևելյան ու հարավ-արևելյան ափերին (Տուա, Անձևացիք): Գլխավորապես այդ գավառներում են գտնվել Աստղիկի սրբավայրերը՝ համաձայն մատենագրական տեղեկությունների: Մնացած տեղանունները, որոնց հիմքում ընկած են Աստղ-Աստղիկ հիմքերը, թեև կրում են դիցութու ամուսը, այնուամենայնիվ դրանց պաշտամունքային հերի մասին դատել անկարելի է:

Հայկական հեթանոսական բոլոր սրբավայրերից առանձնանում էր Տարոնն իր Աշտիշատ ավանով, որը տեղադրվում է Արևելյան Եփրատի կամ Արածանի գետի աջ ափին բարձրացող Քարքեն լեռան վրա: Արշակունյանների օրոք ավանը պատկանում էր Վահունի քրմական տոհմին: Տիգրան Բ-ի օրոք գավառը սրբավայրի հետ միասին լվացից և դրվում արքունիքի ուղղակի հպատակության տակ:

<sup>1</sup> Աստղիկը հիշատակվում է Մովսես Խորենացու, Ազգամագեղոսի, Թովմա Արծրունու, Հովհան Մամիկոնյանի, Միքայել Ասորու, Փիլոն Երրայեցու, Գրիգոր Մագիստրոսի երկերում, ինչպես նաև «Յայսմատրք» և «Տօմապատճառ» մատյաններում:

Ահա այստեղ՝ Անահիտի և Վահագմի (որի տարփածուն, Բարսը և Կիաց է Բամարվել Աստղիկը) մերժաների կողքին գտնվում էր նաև Աստղիկի զլսավոր մերժանը. «...երրորդ՝ մերժանը անուանեալ Աստղկան դից, Սենեակ Վահագմի կարդացեալ, որ է ըստ յունականին Ավիրոդիտէս»<sup>2</sup>:

Պատմիչը բացատրում է, որ պաշտոնապես մերժանը կոչվում էր «Սենեակ Վահագմի», բայց ժողովուրդն այն ըստ ավանդույթի անվանում էր Աստղիկ դիցութու անվամբ: Հենց թեկուզ այդ փաստը խոսում է Աստղիկի՝ պիրված աստվածութի լինելու մասին: Գուցե պատճառներից մենք են դա եր, որ Գրիգոր Լուսավորիչն այդ նույն տեղում հիմնեց առաջին սուրբ եկեղեցի՛ կործանելով Վահագմի (Հերակլեսի) մերժանի բազիները<sup>3</sup>:

Պատմահայր Մ. Խորենացին նշում է, թե ինչպես Արտաշես Ա-ն և Զրա որդի Տիգրան Բ-ն Հունաստանից և Փոքր Ասիայից Հայաստան են բերում անտիկ արվեստի մի քանի քանդակներ և հանձնում Վահումի քրմական տոհմի տնօրինությանը: Դրանց թվում. «...զՀերակլայն զանապատկերն... զՎահագմ յիրեանց վարկանելով նախնի, կանգնեցին ի Տարօն, յիրեանց սեպհական գետն լԱշտիշատ»<sup>4</sup>, իսկ Աֆրոդիտեի արձանը իբրև Հերակլեսի տարփածուի՝ կանգնեցնում են նենց Հերակլեսի արձանի մոտ՝ «...Ասիրոդիտայ զզպատկերն իբրև Երակեայ տարփավորի՝ առ որին պատկերին Երակեայ հրամայեաց կանգնել յաշտից տեղիսն»<sup>5</sup>: Մ. Խորենացու այս վկայությունը գալիս էր լրացնելու Ազաթանգեղոսի տեղեկությունները:

1971 թ. Բ. Առաքելյանի ղեկավարած հնագիտական արշավախմբի ուժերով, Արտաշատի պեղումների ժամանակ հայտնաբերված կնոր մարմարն արձանը, որն իր ոճական առանձնահատկություններով և արվեստի նրբագեղությամբ բնորոշ էր հելլենիստական դարաշրջանի Աֆրոդիտե դիցութու պատկերաքանդակներին, հավանուեն պատկանում է Մ. Խորենացու վկայած Հայաստան բերված Հունական աստվածների՝ Զևսի, Աթենասի, Արտեմիսի, Աֆրոդիտեի, Հերակլեսի, Հեփեստոսի արձանների թվին<sup>6</sup>, որոնք բարձրացվելով և համապատասխանեցնելով հայկական հեթանոսական պանթեոնի աստվածներին, տեղադրվեցին նրանց տաճարներում:

<sup>2</sup> Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 411:

<sup>3</sup> Փամստոս Բուզան, Պատմութիւն Հայոց, Երևան, 1968, III, ԺԴ, էջ 95: Ազաթանգեղոսի վկայությամբ Գ. Լուսավորիչը Հունաստանից բերել էր Ս. Հովհաննեսի և Աթանագինես նախավկայի մասունքները և ցանկանում էր գերեզմանել Վահումանի մերժանի տեղում, սակայն, Տիրոց կամքով, մատու են կառուցում և թաղում մերժանից ոչ հեռու: Բարձր լեռան լանջին և ապա «տերութական խաչի» ուժով տապալում բազիների ողջ շինությունները (տե՛ս Ազաթանգեղոս, էջ 411-412):

<sup>4</sup> Մովսէսի Խորենացոյ Մատանագործիւմ, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1865, էջ 84:

<sup>5</sup> Ա.Ա., էջ 88:

<sup>6</sup> Բ. Առաքելյան, Արտաշատ, 1970-1971 թթ. հնագիտական պեղումների հիմնական արդյունքները (ոռուելու), Երևան, էջ 42:

Այստաշատի այդ պեղումները արգասավորվել են նաև մանրաքանդակ արձագիկների հայտնաբերմամբ, որոնք կերպավորում են լոգանքի պատրաստվող մերկացող կառշ և պատկերում են Աստղիկ դիցություն<sup>7</sup>: Այս և տերակոտի մի քանի արձակները՝ Աֆրոդիտե և Աստղիկ դիցութիւններին պատկերող, իրենց մշակմամբ և արվեստի ճրագեղությամբ նույնպես հիշեցնում էին Հունատանի հելլենիստական դարաշրջանի քանդակագործությունը և համարվում էին Պրաքսիստեղի ու նրա դարոցին պատկանող ստեղծագործությունների ազդեցությամբ ստեղծված:

Մ. Խորենացու բերած մեկ այլ ավանդության համաձայն Տարոնի տերերն են համարվել Նոյ-Քսիսութրոսի որդիներն ու դրատրը՝ շրինեղից թեսու ծնված Աստղիկը<sup>8</sup>: Նա էր, որ պատմահոր վկայությամբ՝ հաշտեցնում է գծոված եղբայրներին՝ Սևմի դեմ ըմբռստացած Քամին և Հարեթին: Նա էր, որ զավախի Մակունք գտնի մոտ, ըստ ժողովրդական ավանդության կառուցել է տալիս Աստղաբերդը՝ իր եղբոր՝ Զրվանի (որ նույն Սևմն էր) «ապահովության» համար: Եվ, Վերշապես, Աստղիկն էր նաև իր այդ եղբոր որդիների փրկիչը, որոնցից կոտսերագույնի՝ Տարբանի անունով է անվանակոչվել է Տարոնը<sup>9</sup>:

Աստղիկը Տարոնում այնքան մեծ ժողովրդականություն էր վայելում, որ բուն սրբավայրերից բացի նրա անունով են կոչվել բազմաթիվ բերդեր, լեռնագագաթներ, գետեր և շներ: Դրանց մասին հիշատակություններ են պահապանվել իմշակես պատմիչների երկերում, այնպես էլ ժողովրդական բանավոր ավանդագրույցներում:

Գրավոր աղբյուրներում ավանդված վկայություններից բացի Աստղիկ դիցություն մասին բանավոր մի գողտրիկ ավանդություն էր պահպանվել Տարոն աշխարհում, որը գրի է առել Գարեգին Վարդապետ Սրվանձտյանցը անցյալ դարավերջին. «Եփրատը երբ Մշոն դաշտը կմտնե, Կանան սարերուն մեջ զարնվելով քարերուն մեղ կիրճով մը սղմվելով գու՞ն գու՞ն ծայն մը կարձակե. և այդ տեղը կոչվի Գուոգուուա, ուր Աստղիկի լոգարանն է եղեր: Եվ քանզի գիշերները լվացվելու սովորություն ուներ Աստղիկը, Դաղոնաց սարին վրա մեծ կրակ կվառեին տարփավոր կտրիճները, որի լուսով կոյստեհն Աստղիկի չքնաղ գեղեցկությունը, հնարած է Աստղիկ, որ մշուշ պատե այս ամբողջ միջավայրը, այսինքն Մշոն դագաց ի ծագու, թե ամառն, թե ձմռն, մինչ ի ծունկս սարերուն, որով անհնարին կը լինի որ-կիցե կողմի լեռներն են տեսնվիլ: Եվ գուցե այս շարունակ և թանձր մշուշն այդ եր-կիրը կոչված լինի Մուշ: Արդեն բնակիչը այս երկտող հանգներով կերգեն.

<sup>7</sup> Ժ. Խաչատրյան, Անտիկ շրջանի կորուպատիկան, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, № 5:

<sup>8</sup> Մովսէսի Խորենացու Մատենագրութիւն, Պատմութիւն Հայոց, էջ 16: Պատմիչը նեմվում է Բերուան Սիրիայի հաղորդած տվյալների վրա:

<sup>9</sup> Ամո, էջ 16:

Մշու սարեր մշուշ է,  
իր հողն ու ջուր անուշ է»<sup>10</sup>:

Աստղիկ դիցուիու մասին անզնահատելի տեղեկություններ է հաղորդում պատմահայր Խորենացին, մասնավորապես, Ակարագողեղով նրա սրբատեղիմերից մեկը, որ գտնվում էր Անձնացիք գավառի Պաղատ կոչված լեռան գագաթին. «...ի գլուխ լերինն Պաղատոյ, զոր ասէին սաստիկ յոյժ ի նմա լէալ դիացն տուն Արամագդայ և Աստղկայ մեծարէին: Եր յաճախ պաշտամամքը տօն կարդային, որ է Պաղատ»<sup>11</sup>: Պաղատ լեռան նշված տաճարներում հին ժամանակներում մեծ տոնախմբություններ են կատարվել և Աստղիկի հետ միասին երկրպագվել է Արամագդը: Այսպիսով, Աստղիկն այդտեղ պաշտվել է հատուկ տոնակատարությամբ, որ կրել է Պաղատ անունը: Դժբախտաբար, այդ տոնի մասին տեղեկություններ չեն պահպանվել: Հստերևության, տոնի անունը կապված է հայերեն պաղատի բառի հետ, եթե մանավանդ Ակատի առնենք, որ լեռնագագաթները (հմմտ. Թաքրո) հնուց ի վեր հայտնի են եղել որպես աղոթատեղիներ, քանի որ ըստ նախնիմերի հավատալիքի՝ Աստված այդտեղ, կարծես, ավելի «հասանելի» էր դառնում կամ մարդիկ ավելի էին մոտենում նրամ՝ Բարձրյալին:

Այսպիսով, պարզվում է, որ Աշտիշատը և Պաղատ լեռն այն սրբավայրերն են, որտեղ հատուկ պաշտամունքի է արժանացել Աստղիկ դիցուին հեղեղիստական դարաշրջանում:

Դիցուիու մի քանի այլ սրբատեղիներ են հայտնի Տարոն գավառի սահմաններից դուրս: Այդպիսի սրբատեղիների հետքեր են պահպանվել Քոյի գետի վերին հոսանքի շրջանում, որտեղ ըստ ավանդության, Ս. Գևորգ եկեղեցու տեղում, հնագոյն ժամանակներում, հիշատակվել է Աստղիկ դիցուիուն նվիրված մեհյան (այն հետագայում եկեղեցու էր վերածված առանց էական փոփոխությունների): Ի դեպ, Քոյի վտակը, որի ափին գտնվելիս է եղել սրբավայրը՝ հայտնի է Աստղաբերդ անվամբ, իսկ քիչ հեռվում գտնվել է նաև նույնանուն գյուղը և բերդը<sup>12</sup>:

Թերևս, մյուս նշանավոր սրբավայրը, որտեղ երկրպագել են Աստղիկին՝ Տոսպ գավառի Արտամետ դաստակերտն է: Թովմա Արծրունին Ակարագրում է Արտամետը՝ Արտաշեսի հիմնած քաղաքը, որի մերձակայքում փոքր ու գոգածն մի եռանուղ հովտում, նա փորվածքի ձևով կառուցում է բարձրաբերձ մի աշտարակ և նրա վրա շինում Աստղիկի բազինը ու մի փոքր հեռվում նաև գանձատունը. «...ի մէջ երեքարմատեան գոգածն հովտին փոքրու, որ յերից բլրոցն խոնարհի՝ շինէ աշտա-

<sup>10</sup> Գ. Սրբանձտյանց, Գրոց ու Բրոց, Կոստամենուպոլիս, 1874, էջ 97:

<sup>11</sup> Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւն, Պատմութիւն Սրբոյ Հոհիսիմնանց, Վեմետիկ, 1865, էջ 301:

<sup>12</sup> Տե՛ս Հայաստանի և Բարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, 1986, հ.1, էջ 342-346:

րակ բարձրաբերդ փողուածոյ միջոցաւ, և ի վերայ նորա կանգնէ զԱստղեան պատկերն եւ մօս նորա զոտն գանձու պաշտպանութեան կողցն»<sup>13</sup>: Այդ վայրերն են եղել Արտաշես Բ-ի և մանավանդ նրա կնոց՝ Սաթենիկի սիրված զրոսատեղիները: Սաթենիկի սիրո մասին՝ հանդեա Աստղիկը, ասվում է, որ նա չկարողացավ ազատվել Աստղիկի պաշտամունքից անզամ քրիստոնեության ընդունումից հետո ու շարունակում էր երկրագեղ մեր այս աստվածութուն և զրոսատեղի էր ընտրել նրա արձանի ու մեխյանի ստորոտները<sup>14</sup>: Թովմա Արծրունու այս մանրագնին նկարագրությունը լրացնում է այլ աղբյուրներում հանդիպող Արտամեան քաղաքի մասին տեղեկությունները ևս և օգնում է պատկերացնել, թե ինչ էին իրենցից ներկայացնում հին մեթեատեղիները:

Դ. Ալիշանի «Հին հավատքում...» բերվում է նաև XIII դարի մատենագիր Վաճական Վարդապետի այն վկայությունը, ըստ որի Գրիգոր Լուավորչի կողմից ներանոսական տաճարների ավերման և աստվածների տունների խափանման ժամանակ խաթարվել է նաև Աստղիկին նվիրված Վարդապետի տոնը<sup>15</sup>:

Նույն գավառի տարածքում Վարագա լեռնան վրա գործել է նաև մի այլ կուսուն, որին կից եղել է Աստղկան բերդը<sup>16</sup> (Աստղաբերդ): Այդտեղ, մինչև նոր ժամանակները նշմարվում էին քարակերտ պատերի նևոքեր, որոնք, հավանաբար, վաղեմի մեխյանի մնացորդներն են:

«Պատմութիւն Տարօնոյ» գրքի հեղինակը՝ Հովհան Մամիկոնյանը, վկայում է դիցուհու սրբավայրերից ևս մեկի մասին: Նա պատմում է, թե ինչպես Խոսրովը քրոջ որդուն՝ Միհրանին ուղարկում է Տարոնի կողմերը երեսուն հազարանոց զորքով՝ տեղի մեխյանները կործանելու առաջադրանքով: Եվ երբ նրանք հասնում են Հաշտեմից կողմերը և մոտենում են Արծան բնակավայրին, այնտեղ գտնում են մի բազին ու նրա վրա գրաված խոսքերը կարդալուց հետո, անմիջապես որոշում են կործանել այն<sup>17</sup>:

Աստղիկի սրբավայրերի ուսումնասիրությունը թույլ է տախս եզրակացնելու, որ պաշտամունքային բուն կենտրոնը եղել է Տարոնը, մասնավորապես, Խանակնյան սրբատեղին, որտեղ քրիստոնեական շրջանում հիմնադրվեց Աշտիշատի Ս. Կարապետ վանական համալիրը: Այդտեղից պաշտամունքը տարածվել է դեպի հյուսիս՝ Քηի, արևմուտք՝ Հաշտյանք, արևելք ու հարավ-արևելք՝ Տոսա և Անձեվացիք:



<sup>13</sup> Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն Արծրունաց տաճ, Երևան, 1935, I, Ը, էջ 88:

<sup>14</sup> Դ. Ալիշան, Հին հավատք կամ հեթանոսական կոսմք Հայոց, Վեճետիկ, 1895, էջ 280:

<sup>15</sup> Ան, էջ 281-283:

<sup>16</sup> Նոյն ամունք կողոք քերդերմ այլուր հայտնի են նաև Աստպարերդ տարրերակով:

<sup>17</sup> Թովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Վեճետիկ, 1832, էջ 28: